

## **ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ Է ԱՐԺԱՆԱՅԵԼ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՅԻ ՓՈԽՏՆՕՐԵՆԸ**

09.12.2014

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում երկարամյա գործունեության և ծննդյան 70-ամյակի կապակցությամբ խրախուսանքների արժանացավ Գեղարքունիքի մարզային մարզադպրոցի փոխտնօրեն՝ Լալա Սուրենի Ներսիսյանը: Նրան հուշամեդալները, հուշանվերները և շնորհակալագրերը հանձնեց Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանը: Հոբելյարի ծննդյան օրվա կապակցությամբ Գեղարքունիքի մարզպետարանում կազմակերպվել էր պարգևատրման արարողություն: Լալա Ներսիսյանը խրախուսվեց Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի շնորհակալագրով: Աճող սերնդի ֆիզիկական կրթության և դաստիարակության ոլորտում ներդրած մեծագույն ավանդի և ծննդյան օրվա կապակցությամբ հոբելյարը պարգևատրվեց ՀՀ Կրթության և գիտության բարձրագույն պարգևով՝ „Ոսկե հուշամեդալով, , ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության շնորհակալագրով, „Աշխատանքային ռեզերվներ,, մարզական կազմակերպության վկայագրով և հուշանվերով: